

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
«Անցումային արդարադատության գործիքների կիրառման հեռանկարները
Հայաստանում» խորագրով լսումների

Նախապատմություն. 2018թ. մայիսից ի վեր անցումային արդարադատության թեման բուռն քննարկումների առարկա է դարձել քաղաքական, մասնագիտական և առհասարակ լայն հասարակական շրջանակներում:

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի առաջին իսկ նստաշրջանից այս հարցը դրվել է արդեն օրակարգային քաղաքական քննարկումների սեղանին, և, կարծես թե, համընդհանուր ընկալում կա, որ հենց Ազգային ժողովն է այն ներկայացուցչական մարմինը, որը պետք է զբաղվի այս հարցով:

Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի կողմից տարբեր առիթներով հայտարարվել է, որ հաշվի առնելով թեմայի վերաբերյալ հասարակության շրջանում ձևավորված ակնկալիքները և մեծ հետաքրքրությունը, ինչպես նաև հարցի զգայունությունը՝ թեմայի նախնական ուսումնասիրություններից հետո կնախաձեռնվեն նաև լայն հանրային քննարկումներ Հայաստանում անցումային արդարադատության (այսուհետ տեքստում նաև՝ ԱԱ) անհրաժեշտության գնահատման, ԱԱ գործիքների կիրառման հեռանկարների և հնարավոր ձևերի վերաբերյալ:

Խորհրդարանական լսումների վերաբերյալ. ՀՀ Ազգային ժողովի նախագահը, օգտագործելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով իրեն վերապահված խորհրդարանական լսումներ հրավիրելու իրավասությունը 2019 թվականի մայիսի 24-ին հրավիրում է խորհրդարանական լսումներ, որի թեման կլինի «Անցումային արդարադատության գործիքների կիրառման հեռանկարները Հայաստանում»: Այս մասին Կանոնակարգի 125-րդ հոդվածով սահմանված կարգով Ազգային ժողովի նախագահն ընդունել է համապատասխան որոշում, որով սահմանվել են նաև լսումների անցկացման ընթացակարգը՝ ԱԺ աշխատակարգի 21-րդ գլխին համապատասխան:

Նկատի ունենալով թեմայի վերաբերյալ մեծ հետաքրքրությունը՝ լսումները կանցկացվեն Ազգային ժողովի նիստերի դահլիճում:

Լսումների ընթացքում կնախատեսվեն մի քանի զեկույցներ, նախնական պատկերացմամբ դրանց շրջանակներում կշոշափվեն անցումային արդարադատության թեմայով միջազգային փորձին, ԱԱ առանձին գործիքների կիրառման հեռանկարներին, ինչպես նաև գործընթացի կազմակերպման հնարավոր տարբերակներին վերաբերող հարցեր: Բանախոսների հետ հարցուպատասխանի, ապա նաև էլույթների միջոցով լսումների մասնակիցները

հնարավորություն կունենան ունենալ շահագրգիռ քննարկում՝ ներկայացնելով տարբեր տեսակետներ:

Լսումների ընթացքում ելույթներ կունենան նաև հրավիրված միջազգային փորձագետներ:

Լսումների նպատակը. Լսումների նպատակն է ներառական և շահագրգիռ քննարկման արդյունքում քաղաքական մարմնի մոտ ձևավորել պատկերացում, թե հանրության տարբեր շրջանակներն ինչպես են գնահատում Հայաստանում անցումային արդարադատության կիրառման անհրաժեշտությունը, ինչ պատկերացումներ ունեն դրա վերաբերյալ և ինչ ակնկալիքներ ունեն այդ գործընթացից:

Խորհրդարանական լսումները հնարավորություն կտան հանրության լայն շերտերին, այդ թվում՝ քաղաքական ուժերի ներկայացուցիչներին, մասնագիտական ու ակադեմիական շրջանակներին, մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ինչպես նաև հետաքրքրված քաղաքացիներին, մասնակցելու քննարկումներին և ներկայացնելու իրենց կարծիքները:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«Անցումային արդարադատության գործիքների կիրառման հեռանկարները Հայաստանում» թեմայով լսումների

Օրը՝ 24 մայիսի 2019թ

Վայրը՝ ՀՀ ԱԺ նիստերի դահլիճ (առավելագույնը 150 նստատեղ)

Տևողությունը՝ 10:00-16:00 (13:00-14:00 ընդմիջում)

Լսումներին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել մինչև ամսի 22-ը՝ ժամը 18:00-ն՝ նամակ ուղարկելով shushanna.tevanyan@parliament.am էլեկտրոնային հասցեին:

Լսումների ընթացքում կնախատեսվեն առնվազն երեք բանախոսի զեկույց՝ 20-ական բույս տնտեսության, որոնց կհաջորդեն 20-ական բույս տնտեսության հարցուպատասխանի սեսիաները: Նախնական պատկերացմամբ բանախոսների զեկույցների շրջանակներում կշոշափվեն անցումային արդարադատության թեմայով միջազգային փորձին, դրա առանձին գործիքների կիրառման հեռանկարներին, ինչպես նաև գործընթացի կազմակերպման հնարավոր տարբերակներին վերաբերող հարցեր:

Հարցուպատասխանի յուրաքանչյուր սեսիայի ընթացքում որոշակի ժամանակահատված կհատկացվի Ֆեյսբուք սոցիալական ցանցով ստեղծված լսումների միջոցառման (Facebook event) շրջանակներում ուղարկված հարցերին բանախոսների կողմից պատասխանելու համար: Ֆեյսբուքյան քննարկումը կվարի համապատասխան մասնագետը:

Լսումների մեկնարկին բացման խոսքով հանդես կգա Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը:

Լսումների ընթացքում նախատեսվում են նաև միջազգային հրավիրյալ փորձագետների ելույթներ անցումային արդարադատությանն առնչվող առանձին հարցերի վերաբերյալ:

Վերջին մեկ ու կես ժամը կհատկացվի ելույթներին, որոնց համար հերթագրման գործընթացը կտևի լսումների սկզբից մինչև ճաշի ընդմիջման ավարտը: Կախված ելույթների համար հերթագրված անձանց թվից և նկատի ունենալով ելույթների համար սահմանված իննսուն բույստնոց ժամանակահատվածը՝ լսումների վարողի կողմից կսահմանվի ելույթների հնարավոր օպտիմալ ժամանակահատվածը:

Կնախատեսվի լսումների ամփոփիչ հակիրճ եզրափակիչ ելույթ Ազգային ժողովի նախագահի կողմից:

Լսումների ընթացքում կապահովվի հայերեն-անգլերեն երկկողմանի համաժամանակյա թարգմանություն:

Լսումների վերջնականացված օրակարգը լսումներից առնվազն երեք օր առաջ կտեղադրվի Ազգային ժողովի կայքում: